

Հանդէպ զօրաւոր, ատակ եւ ընդունակ է: Անոնց մէջ կը ճանչնամ այնպիսի գործակալներ ու փաստաբաններ՝ որոնք վերապէօցին, Հոսթին, Քելեմէնը, Կէօրէը, Քիթոնիչը¹³ իրենց մատներուն վրայ ունին եւ կրնան չափուել անդլիացի Փեթի եւ Փոքսի հետ:

Մէկ խօսքով՝ զուարթ, հիւրասէր, աշխատասէր եւ աստուածալախ են հայերը. կեցցեն:

* * *

Հեղինակը հայերու մասին այս կարծիքը ոչ թէ իբր Հոնգարիոյ աղնուականութեան ներկայացուցիչ մը տուած է, այլ իբր ուսումնական եւ գիտնական մը, իր ժամանակի մտայնութիւնը գերազանցող մարդ մը, որ իր արժանիքներուն համաձայն կը դատէր ամէն ժողովուրդ. ասիկա շատ յայտնի է իր ձեռագրի երկրորդ մասին մէջ (թուղթ 174)՝ դրած կոչէն ալ. «Սորվէ յարգել հրեաները»:

Փերեզենցի Լատիսլաւ Նատի այսպէս կը վերջացնէ իր ձեռագիրը.

«Հայերն հարուստ կը դառնան,

Դրամական գործ ընող կ'ըլլայ հրեան,

Գնչուներն ամէն տեղ ծառայ կ'ըլլան»:

* * *

Նոյն հեղինակի դանադան համառօտ գրութիւններ պարունակող ձեռագրին մէջ Հայոց վերաբերեալ բան մըն ալ գեռ կարելի է գտնել: 1822ին, հանդանակութեան մը համար իրեն այցելած էր Փրանկիսկեաններու մեծաւորը՝ Հ. Նազար Սապոյ, որ իրեն կը պատմէր իր գլխին անցած հետաքրքրական արկածները, 1818ի տարիներէն, երբ թրքական երկիրներէն կ'անցնէր իր առաքելական պաշտօնին բերումով:

13. Ժամանակի հունգարացի նշանաւոր փաստաբաններ:

14. Սոփիայէն:

Ձեռագրին 107 թերթին վրայ կը կարդանք.

§ 7. — «Ասկից¹⁴ յոյներու մեծ քաղաքը Արխանտա Հասիա մեկնեցայ՝ իբր քարոզիչ, ուր մեծ բազմութեամբ կը բնակէին թուրք բարձրաստիճան զինուորականներ, եւ մեծ վաճառականներու շուկութեան մէջ ընկղմած՝ Եւրոպայի գեղեցկագոյն կիները կարելի էր տեսնել այնտեղ: Հոն հանդիպեցայ Հոռմէն եկած Փրանկիսկոս Փերարի Եպիսկոպոսին եւ Եարտանի Աթոռակալին, որոնք ինծի հետ մէկտեղ Ռուշթուքի Երսէնի Օղլուին վանչուեցան: Անոնց անցադիրները բժիշկի անունով հանուած էին. բայց ծերունի եպիսկոպոսը սխալելով պատասխանը՝ ինքզինքը քահանայ ներկայացուցած էր. ուստի իրենց պատասխաններու հետեւանքով իբր լրտես եւ կասկածելի անձեր՝ խափազի, այսինքն՝ բանտ դրուեցան: Իսկ ես իմ փերմանէս արդէն ծանօթ ըլլալով իրենց, թուրքերէն ալ լաւ կը խօսէի¹⁵, ազատ արձակուեցայ: Բայց ինծի մեծ մտահոգութիւն կը պատճառէր ծերունի եպիսկոպոսին ազատութիւնը, որ իր ընկերով միասին երեք օր վերջ պիտի գլխատուէր: Օ'ն, ուրեմն, 10 օսկիով ձի մը վարձեցի եւ Սեբաստիանոս ու Մարտինոս հարուստ հայերուն վազեցի, որոնք Օղլուի լաւ բարեկամներն էին. ասոնք ամսան — այսինքն՝ ներողութիւն առին, երբ արդէն գրեթէ գլխատման վայրը կ'երթային: Ազատեցան եւ հայերու ծախքով մինչեւ Դանուբ, մեծ Ռումանիա տարուեցան»:

Հ. Նազարի արկածները յաւերժացնող այս ձեռագիրը տպուած է «Felső Magyarországi Minerva» (Բարձր Հունգարիոյ Միներվա) թերթին մէջ 1825 տարւոյն Բ. թիւին մէջ:

Հունգարեիէնէ քարգմանեց
Հ. Ա. Ֆ.

15. §. 7ին մէջ ալ կը գրէ թէ «Սոփիայի մէջ ալ թրքական հագուստներով կը պտըտէի, իբր վաճառական»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԳԵՐԸ

ԱՆԳԵՂ ԲԵՐԴ

Հայաստանի հնագոյն բերդերէն մէկն է, որ կը գտնուի Անգեղոտան գաւառին մէջ. այժմ Տիգրանակերտի կուսակալութեան «Արդանա» գաւառին մաս կը կազմէ. Հիւլաճման դայն կը դնէ «Արդանա-Սու»-ի վրայ, որ փոքրիկ գետ մըն էր, նոյն գաւառին մէջէն անցնող¹:

Փ. Բիւզանդ դայն կը գետեղէր Անգեղոտան գաւառին մէջ. «Եւ դային (զօրքն պարսից) պահ արկանէին շուրջ զԱնգեղ դամուր բերդան, որ է յԱնկեղ տանն դաւառին»²:

Բերդը տակաւին կանգուն է լեռան դաւաթին վրայ, եւ ունի միակտուր քարէ բուրդեր, ներսը ջրհոր կամ գուբ, ուր կը հաւաքուէր Տիգրիսէն հասնող ջուրը, եւ ուր կարելի էր իջնել սանդուղէ մը՝ մինչեւ բերդին յատակը, եւ պաշարումի տեսն ջուր առնել անկէ, առանց տեսնուելու թշնամիէն:

Բերդին արեւելակողմը լայն ձոր մը կայ, որուն երկու կողմերը կ'երեւին վերմախոր սենեակներ, որոնք կը կարծուին թէ եղած ըլլան գերեզմաններ. ձորին մէջ անկիւնը նոյնպէս կ'երեւին հին եկեղեցւոյ մը մնացորդները, սեւցած քարեր, որոնք կրնան մեհեանի մը մնացորդներն ալ ըլլալ. այս բոլորը ցոյց կու տան թէ հոս հին ատեններէ ի վեր նշանաւոր տեղ մը եղած ըլլալու է³:

Ե՞րբ շինուած է Անգեղ բերդը եւ որոնցմէ՞. զանազան են կարծիքները մեր պատմագիրներուն. ոմանք կը համարին թէ Անգեղ բերդը Ուրարտական շրջանին շինուած բերդ մըն է, ինչ որ շատ հաւանական կ'երեւի, որովհետեւ շուրջը գտնուած են բազմաթիւ ուրարտական արձանագրութիւններ, եւ Փ. Բիւզանդ կ'ըսէր. «քաղաւ գանձ մքերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ»⁴: Բիւզանդ՝ հին ժամանակներ ըսելով՝ ան-

շուշտ նախաքրիստոնէական ժամանակաշրջանին կ'ակնարկէ. եւ արդէն Արշակունեաց շրջանին, եւ անկէ առաջ, Անգեղ բերդը եղած է մեր թագաւորներու գերեզմանոցը, եւ գանձատունը, «զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց»⁵:

Այս դանձին տիրանալու համար էր որ Մերուստան Արծրունին հոն մտնելով՝ կողոպտեց ինչ որ գտաւ, մինչեւ անգամ թագաւորներուն գերեզմանները. «Եւ ինչպէս կ'ըսէ պատմիչը, հոն էր մեր Սանատրուկ թագաւորին գերեզմանը, որ միակտուր հսկայ դանդուած մը ըլլալով՝ չկրցաւ բանալ. «ոչ վարացին բանալ վասն անհեղեղ սկայագործ հաստաչինած ճարտարագործ արարածոցն»⁶:

Ուրեմն կարելի է հետեւցնել՝ թէ Անգեղ բերդը Գրիստոսէ շատ դարեր առաջ գոյութիւն ունեցեր է:

Սերէոս պատմիչ եւս կը յիշէ Անգեղ բերդը, երբ կը խօսի Սոսրով Բ.ի մասին, որ իշխած է 337-342ի ատենները. իսկ Բիւզանդ՝ Արշակ Բ.ի օրերուն ակնարկելով (350-357)՝ կ'ըսէ թէ Անգեղ բերդին իշխանութեան ամէնէն փայլուն շրջանը եղած է այդ: Ուրեմն կրնանք ըսել՝ թէ Անգեղ բերդը Արշակունեաց իշխանութեան ամէնէն զօրաւոր բերդերէն մէկը եղած է, եւ մեծ դեր ունեցած է անոնց քաղաքական կեանքին վրայ:

Արշակունեաց թագաւորութեան շրջանին Անգեղ բերդին իշխան կը յիշուի Դրաստաւաւա Ներքինին, «որ յամա Տիրանայ թա-

1. Հիւլաճման, «Հին Հայոց տեղւոյ անունները», տպ. Վիեննա (Ազգ. Մտնդ. ԾԳ.) 1907, էջ 157:
2. Փ. Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Դ, իդ, տպ. Վենետիկ, 1933, էջ 149:
3. Հ. Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, տպ. Վենետիկ, 1903-5, էջ 79:
4. Փ. Բիւզանդ, Անդ, էջ 149-150:
5. Անդ, էջ 149:
6. Անդ, էջ 150:

գաւորին Հայոց (342-350) լեալ էր իշխան տան գաւառին, եւ հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին»⁷:

350-367 շրջանին, Անգեղ բերդը կ'ենթարկուի, ինչպէս տեսանք, ամէնէն ծանր կողոպուտին՝ Մերուսի Արծրունիի ձեռքով. բերդը երկար պաշարումի կ'ենթարկուի եւ կը զիջուի, հաւանաբար Վասակ Մամիկոնեան սպարապետի առաջնորդութեան տակ:

Սակայն Արշակունեաց թագաւորութիւնը սկսած էր կորսնցնել իր ոյժը, եւ պաշտպանութեան միջոցները. հայ նախարարներու ղեմադրական ուղին թուլացած էր եւ պառակտում ինկած նախարարական տուններուն մէջ. ժամանակն էր որ պարսիկները ոտքերնին դնէին հայ հողին վրայ: Արշակի մահէն վերջ՝ Հայերը կ'իյնան պարսկական տիրապետութեան տակ, կը գրաւուի Անգեղ բերդը, կը կողոպտուի եւ կը քանդուի, եւ Ձ. դարէն վերջ՝ այլեւս մեր պատմութեան մէջ չի յիշուիր⁸:

Անգեղ բերդը իր քանի մը խարխուլ պարիսպներով՝ հաւանաբար կանգուն կը մընայ Տիգրիսի ափերուն վրայ, Տիգրանակերտի մօտերը. սակայն ժամանակը թոյլատու եղած չէ որ հնախօսները զբաղին անոր պեղումներով, ուր թաղուած կը մընան մեր պատմութեան ամէնէն թանկագին էջերը:

ԱՆԳԵՂ ԲԵՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն անունով երկրորդ բերդ մըն ալ կը յիշուի մեր պատմութեան մէջ, սակայն այս Անգեղ բերդը կը գտնուի Այրարատի Ծաղկոտն գաւառին մէջ. հոս է որ՝ ըստ Ղազար Փարպեցիին՝ կու գայ եւ բանակ կը դնէ Վարդան Մամիկոնեան, պարսկական պատերազմի ժամանակ. «մերձ ի բերդն ամուր զոր Անգեղն անուանեն, զայն տեղօք արարեալ բանակեալ արանց՝ դադարէին անդ գաւառըս տօթոյն»⁹:

Եղիշէ եւս կը ճանչնայ այս բերդը եւ կը դնէ Չարեհաւանի մօտերը¹⁰:

Ուրեմն այս Անգեղ բերդը, ինչպէս կը տեսնուի, բոլորովին ուրիշ բերդ է Ան-

գեղտան բերդէն, եւ վարելի չէ նոյնացնել երկուքը, քանի որ Վարդան Մամիկոնեան հոս կ'ապաստանի, մինչ միւսը կը գտնուէր Տիգրանակերտի մօտերը, ուր դացած չէ Վարդան:

Այրարատեան Անգեղ բերդը կը յիշէ Պրոկոպիոս յոյն պատմիչը եւս, իր յոյն պարսկական պատերազմի զրքին մէջ. եւ զայն կը կոչէ Անկլոն, որուն մօտերը եղած են յոյն-պարսկական պատերազմները: Պարսից խոսքով Անուշուրան թագաւորը յունաց դէմ վըր կ'ընէ իր Նապեա զօրավարը, որ գալով Հայաստան՝ կ'ամրանայ Անգեղ բերդին մէջ. զօրքերէն մաս մը խաբէութեամբ կը պահէ նոյն գիւղի տուններուն եւ քարայրներուն մէջ, եւ ձայն հանել կու տայ՝ թէ պարսիկները փախեր գացեր են. այս յոյն-պարսկական պատերազմին մաս կը կազմէին Կամսարական տունէն Ներսէս եւ Սահակ՝ հայ եւ հերուրացի գունդերով: Յունական բանակը անդէտ եղելութեան, եւ խաբուած տեղւոյն բնակիչներէն, վըր սկսի բարձրանալ Անգեղ բերդը. պարսիկները իրենց դարաններէն դուրս ելլելով, դուրսէն եւ ներսէն աքցանի մէջ կ'առնեն եւ լաւ ջարդ մը կու տան յունական բանակին. այս պատերազմին մէջ նշանաւոր եղած է քաջն Ներսէս Կամսարական, որ պարսից բանակներու զրոհը շատ անգամներ ետ մղած է, սակայն այս կողմին մէջ աչքէն չ'իջարուրուելով, եւ երկար չ'ընթանալով՝ կը մեռնի, մեծ սուգ պատճառելով յոյն բանակին¹¹:

Այրարատեան Անգեղ բերդը յունական իշխանութեան օրով կը մնայ հայ իշխաններու ձեռքը. Սեբէոս կը յիշէ Թէոդոր խորխոռունին, որ կը պատերազմի պարսից խոսքով Սպրուէզ թագաւորի Մենիտամ զօրավարին դէմ. սա գալով կը պա-

7. Անդ, Ե, է, էջ 210:

8. Անդ, էջ 149:

9. Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, Բ, լա, տպ. Վենետիկ, 1891, էջ 194:

10. Եղիշէի վասն վարդապետի եւ Հայոց պատերազմին, Գ, տպ. Վենետիկ, 1950, էջ 109:

11. Պրոկոպիոս, Պատմ. Պարսից, Բ, Բ, 25:

շարէ Անգեղ բերդը. յունական բանակը տեսնելով պարսից զօրքին բազմութիւնը՝ կը յուսալքուի եւ չ'ուզեր պատերազմիլ, այլ կը մտածեն բերդը խաղաղութեամբ յանձնել պարսից. սակայն քաջալերուած իրենց բերդին անառիկ դիրքէն, պատերազմի կը մտնեն. պարսիկները սանդուղներով կատաղաբար բերդին պարիսպներէն վըր վըր բարձրանան, բազմահազար զոհեր տալով, հուսկ կը հասնին բերդին կատարը եւ արիւնալի կուրէ մը վըրջ՝ կը տիրեն բերդին. Սենիտամ զօրավարը յաղթանակով բերդ կը մտնէ եւ կը կողոպտէ. Թէոդոր խորխոռունին գերի կ'իյնայ, եւ պատուով կը զրկուի Պարսկաստան՝ խոսքով թագաւորին: Սենիտամ հոն բերդապահ մը դնելով վըր վըրադառնայ իր երկիրը¹²:

Հ. Ղուկաս Ինճիճեան վերջին ակնանկ տեսը եղած է Անգեղ բերդին. եւ նկարագրած է զայն հետեւեալ տողերով. «գտանի ի Ծաղկոտն գաւառին Այրարատեան. առ ստորոտով լերինն է գիւղն, իսկ ի դահալէժ գաղաթանն՝ բերդ ամուր համանուն գեղը»¹³:

Այս բերդը եւս մեր վերջին դարու պատմիչները չեն յիշեր. եւ կորսնցուցած են նոյնիսկ անոր վերջին հետքերն ալ. հիմա սակայն Արածանի գետին եզերքը, Ծաղկոտն գաւառին մէջ կը գտնուի գիւղ մը Ղարալիս անունով. այս գիւղը կրնայ ըլլալ մեր հին Անգեղ գիւղը, եւ անոր մերձակայ լերան գաղաթին վրայ կայ բերդ մը, որ հաւանաբար այս Անգեղ բերդն է¹⁴:

ԲՈՐՈՏՆԱՅ ԲԵՐԴ

Կոչուած է նաեւ Որոտնայ բերդ. Սիւնեաց աշխարհի նշանաւոր բերդերէն է, զոր վըր յիշէ Օրպելեան¹⁵: Այս բերդը սեփականութիւն եղած է Օրպելեան իշխաններուն, որոնք օգտուելով Չաքարեաններու իշխանութեան տկարացումէն՝ ուղեցին այս բերդին մէջ Օրպելեան ազատ իշխանութիւն մը կազմել, եւ այս՝ պատճառ եղաւ երկու աւատական տուններու միջեւ երկար պայքարներու. այս մրցակցութեանն ուղեցին օգտուիլ մոնղոլները, եւ քա-

ջալերեցին Օրպելեաններու տունը, տկարացնելու համար Չաքարեանները, որ այս շրջանիս ամէնէն զօրաւոր իշխանութիւնն էր մեր նախարարական տուններուն մէջ:

Ինչպէս գիտենք պատմութենէն, Օրպելեաններու տան հիմնադիրը եղած է Լիպարիտ, եւ իր իշխանութիւնը հաստատած է Վայոց ձորին մէջ եւ ճանչցուած Չաքարէ եւ Իւանէի կողմէ:

Ժամանակի ընթացքին՝ Օրպելեանները շատ զօրացան եւ ընդարձակեցին իրենց իշխանութեան սահմանները, մէջն առնելով նաեւ Բորոտնայ բերդի իշխանութիւնը, եւ սկսան մրցիլ Չաքարեաններու հետ, եւ երբեմն անոնց իշխանութեան գէմ գլուխ ալ վըրցնել, եւ իրենք գիրենք համահաւասար իշխանութիւն համարիլ Չաքարեաններու հետ, ըսելով թէ իրենք իրենց երկիրը եւ իշխանութիւնը ստացեր են ուղղակի Թամար թագուհիէն, Գեորգ Լաչայի հրամանով, Աթապէկ Իւանէէն, ինչպէս կը վկայէ պատմագիրը «հայրենագիր սիւղելաւ» փոխանակ իրենց հայրենեաց¹⁶:

Դեռ աւելի ուշ, Լիպարիտի որդին՝ Էլիկոմ, իր երկիրը եւ իշխանութիւնը ստացած կը համարէր Աւրան Նոյէն, որ այս երկիրը առեր էր իր սուրով¹⁷:

Ահա այս ինքնիշխան ըլլալու դադափարը պատճառ եղած է այս երկու նախարարական տուններու յարատեւ թշնամութեան:

Էլիկոմի վըր յաջորդէ իր եղբայրը Սըմբատ, որուն օրով՝ Օրպելեաններու իշխանութիւնը, ինչպէս ըսինք, աւելի կը զօրանայ. սա կը յաջողի Մանգու խանին աջակցութիւնը ապահովել եւ վայելիլ անոր հզօր հովանաւորութիւնը: Չաքարեանները այս տեսնելով, կը սկսին մի-

12. Սեբէոսի Պատմութիւն, տպ. Կ. Պոլիս, 1851, էջ 75:

13. Հ. Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն Հին Հայաստանի, տպ. Վենետիկ, 1822, էջ 415:

14. Եփրեկեան, Անդ, էջ 178:

15. Ստ. Օրբէլեան, Պատմութիւն Տանն Սիւական, տպ. Մոսկուա, 1861, էջ 301:

16. Անդ, էջ 263:

17. Անդ, էջ 299, 301:

Ջոցներ հնարել՝ տկարացնելու համար դանոնք. շարունակ վր նեղեն դանոնք, այնպես որ կու գայ ժամանակ մը՝ որ Օրպե-լեան իշխանութիւնը կատարեալ ճշմարտ-մային օրեր կ'անցընէ. եւ աղատելու հա-մար այս նեղ կացութեան, Սմբատ 1253ին դարձեալ կ'ապաւինի Մոնկոլ Մանգու-խանի զօրութեան:

Սմբատ երկար ճամբորդութեան մը կը դիմէ, հետը առնելով թանկարժէք նուէր-ներ եւ մեծագին գոհար մը, եւ 1253ին կ'երթայ Գարադորում. հոն կը մնայ երեք տարի, կը սիրաշահի Մանգու խանին սիրտը եւ բարեկամութիւնը, եւ պաշտո-նական կնիքով կը ստանայ աղատ իշխա-նութեան իրաւունք, եւ ինչպէս գեղեցիկ կերպով կը պատմէ նոյն հեղինակը, «ե-տուն նմա փայլող ոսկի, որ էր տախտակ, ունեւոր անուն Աստուծոյ եւ զարքայի զը-րեալ յինքեան... եւ տան նմա զամենայն առաժն թրով Ասլանին՝ եւ զՈրոտն իւր երկրան, որ էր առ Բաջուին եւ իր մե-ծամեծացն. եւ զերդն ԲՈՐՈՏՆԱՅ իւր կերպով, վասն սպանման հօր նորա Լիպա-րիտի, որպէս գին արեան»¹⁸:

Ահա թէ մինչեւ ո՛ւր հասցուց մեր այս նախարարական տուններու մրցակցութիւ-նը. բերել օտար իշխանութիւն մը մեր եր-կրին մէջ, եւ ջլատել հայ ազգային զօրա-ւոր իշխանութեան մը ոյժը:

Սմբատ ուրախութեամբ եւ յաղթանա-կով կը վերադառնայ, եւ կը ներկայանայ Բաջուին՝ Մանգու խանին հրամանադրով. եւ անկէ ալ օգնութիւն առնելով, յետ եր-կար եւ եղբայրասպան կռիւներու՝ կը յա-ջողի տիրանալ Բորոտնայ բերդին, մինչեւ Բղենի սահմանները¹⁹:

Ստուգիւ, Սմբատ Օրպեւեանի իշխանու-թեան օրով՝ Չաքարեանները վերանցուցին իրենց ազդեցութիւնը եւ տկարացան, եւ 1253-1273 տարիներու միջոցին՝ աթաբե-կութեան իշխանութիւնը անցաւ Արծրու-նիներու տան, Սադոն իշխանին, որ Մահ-կանաբերդի Ամիր Քուրդ իշխանին Սա-դուն որդւոյն թոռն էր. ապա 1284ի ա-տենները այս իշխանութիւնը անցաւ Սըմ-բատի եղբոր՝ Օրպեւեան Տարսայիճի²⁰:

Յաջորդ դարերուն Բորոտն բերդի պատ-մութիւնը մեզի անծանօթ կը մնայ. մեր պատմիչները անոր իշխանութեան եւ պատմական անցքերուն վրայէն լռու-թեամբ կ'անցնին:

Ինչպէս սկիզբը ըսինք, այս բերդը յա-ճախ երկու անուններով կոչուած է. Որոտն եւ Բորոտն. սակայն մեր կարծիքով՝ այս երկու բերդերը առանձին բերդեր եղած են. պէտք է նոյնացնել, ինչպէս կը հա-մարի նաեւ Հ. Ղուկաս Ինճիճեան. հաւա-նաբար երկու շատ մօտիկ բերդեր էին. եւ մեր մատենագիրները գրեթէ միշտ միա-սին յիշատակած են, եւ երբեմն ալ սխալ ընթերցում եւ օրինակութիւն մը միացու-ցեր է. այսպէս Վարդան պատմիչ՝ միայն Որոտն կը յիշէ²¹:

Իսկ Ստեփանոս Օրպեւեան որոշ իրար-մէ կը դատէ, երբ կ'ըսէ. «Չաքարէ եւ Ի-ւանէ առին եւ զՍիւնիս զՈրոտն եւ զԲո-րոտն»²²:

Վարդան պատմիչ կ'ըսէ՝ թէ Որոտնայ բերդին քով կային ուրիշ շատ մը բերդեր, որոնցմէ մէկը հաւանաբար Բորոտնայ բերդն էր. «առնու զՈրոտն եւ զմերձակայ զղեական, թէպէտ ոչ զբովանդակ»²³:

Որոտն բերդը շատ աւելի հին կ'երեւի քան թէ Բորոտն. որովհետեւ Ե. զարուն՝ Նղիշէ մեր պատմիչը կը յիշէ զայն, երբ պարսիկները Հայաստան կը մտնեն եւ կը զրաւեն Որոտն բերդը. «եւ առնուին զան-մատոյց զամուրսն՝ զԳառնի... զԿա-պոյտն, զՈրոտն»²⁴:

Ուրեմն կրնանք եզրակացնել թէ Որոտն բոլորովին ուրիշ բերդ մըն է Սիւնեաց աշ-խարհին մէջ, որու մասին առանձին պիտի անդրադառնանք:

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

18. Անդ, էջ 301:

19. Անդ:

20. Հ. Ղ. Ալիշան, Սիսական, Վեներիկ, 1893, էջ 171, 189, 192:

21. Վարդանայ Վրդ.ի Հաւաքումն պատմութեան, տպ. Վեներիկ, 1862, էջ 140-141:

22. Օրբեւեան, Անդ:

23. Վարդան, Անդ:

24. Նղիշէ, Անդ, էջ 131:

ՔԱՆԻ ՍԸ ՓՈՔՐ ՅԱԻԵԼՈՒՄՆԵՐ

«ԲԱՐԱԿ ԵՒ ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ» ՄԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՍ

«Բարամակայ»-ի 1958 տարւոյ թիւերուն մէջ երեւցաւ «Բարակ եւ Սահլ Իպն Սըն-բատ» մենագրութիւնս (էջ 9, 72, 132): Նոյն տարւոյ Մարտ-Մայիս թիւին մէջ՝ արաբերէն բնագրէն թարգմանաբար կը հրատարակուէր ԵԱԳՈՒՊԻ ԱՐԱԲ ՊԱՏ-ՄԱԳԻՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ յօդուածը, Մեծար-դոյ Հ. Աբրահամ Վրդ. Աղամեանէ: Հոն կային նաեւ կարգ մը վիկայութիւններ՝ Բարակի եւ Սահլի մասին, որոնց կարե-ւորութիւնը կը ստիպէ զիս այս քանի մը տողերը աւելցնել մենագրութեանս:

Ա. - Եագուպի, որմէ օգտուած էի խա-լթեանցի անվատահէլի թարգմանութեան վրայէն, մեզի կու տայ Բարակի Ալ-Աֆ-չինէ պարտութեան բուն թուականը, Պատի մէջ, իբր «Հինգլարթի օրը, Ռամա-տան ամսու 9ին, 222ին» հիճրէի, որուն համար Հ. Աղամեան 837 մեր թուականը նշանակած է: Աւելի ճիշտ հաշուար է 15 Օգոստոս 837ի:

Ալ-Աֆչին՝ ըստ Եագուպիի՝ Բարակը փրկի մը վրայ հեծցուցած տարաւ Մամա-րա, Ալ-Մուդաղիմ խալիֆային, ուր հա-սաւ՝ Եագուպիի համաձայն՝ Սաֆար ամ-սոյն 2ին, 223ին հիճրէի, որուն համար Հ. Աղամեան նշանակած է 838 մեր թուա-կանին: Աւելի ճիշտ՝ 3 Յունուար 838, կամ ըստ Տարարիի՝ 223 հիճրէի Սաֆար 3ին. կամ մեր 838 Յունուար 4ին:

Բ. - Այս թուականէն, 838 Յունուար 3էն վերջն է որ ըստ Եագուպիի «Ալ-Աֆ-չին երբ Ատրպատական վերադարձաւ, Հայաստանի վրայ կառավարիչ կարգած էր Մոհամմէտ Իպն Սիւլէյման Ալ-Ալ-տի, որ երբ Հայաստան հասաւ, արդէն Սահլ Սմբատեան Առանի մէջ ապստամ-բած էր ու հոն բռնացած էր: Մոհամմէտ մտաւ անոր երկիրը, յարձակեցաւ վրան գիշեր ատեն ու յաղթեց անոր»: (Այս մա-սը, ինչպէս որ կարելի է տեսնել մենա-գրութեանս մէջ, էջ 22, Ա. սիւն, Բագրատ խալթեանց սխալ կը թարգմանէ): Եա-

գուպիի վիկայութեան այնպէս կարելի է տպաւորուել որ Ալ-Ալտի է որ Սահլի յաղ-թած է, մինչ ընդհակառակը:

Կ'երեւի թէ Ալ-Աֆչին, որ ծրագրած էր Պարսկաստանը աղատել խալիֆաներու Մահմետական լուծէն, կը ջանար կեղծոնը տկարացնել՝ ապստամբութիւններ եւ իրա-րու մէջ կռիւներ ստեղծելով, խալիֆայու-թեան սահմաններուն վրայ: 838-839 թը-ւականին դեռ անորոշ պատճառով մը Սահլ ապստամբած կ'երեւայ խալիֆային դէմ: Այս ապստամբութեան միջոցին՝ Ալ-Աֆ-չինէ նշանակուած Հայաստանի կառավա-րիչ Մոհամմէտ Ալ-Ալտին պարտութեան կը մատնէ եւ անոր քարտուղարը կը սպաննէ:

Գ. - Մենագրութեանս մէջ մոռացու-թեամբ չեմ նշանակած Տարարիի մէկ կա-րեւոր վիկայութիւնը Սահլի մասին: Ան կը գրէ. «Հեղինակութեամբ Թաուք Իպն Ահ-մատի, կ'ըսուի թէ երբ Բարակ վախաւ եւ Սահլ Իպն Մնրատի մօտ եկաւ, Ալ-Աֆչին զրկեց Ապու Սաիտը եւ Պուզպարահ, ո-րոնք եկան եւ Բարակը անկէ (Սահլէ) ա-ռին. ապա Սահլ զրկեց իր որդին՝ Մուա-վիան՝ Բարակի հետ առ Ալ-Աֆչին, որ հրամայեց 100,000 տիրհէմ Մուա'վիային եւ միլիոն տիրհէմ ալ Սահլի, յանուն հա-ւատացեալներու Հրամանատարին (խալի-ֆային), ինչպէս նաեւ ճոխ կերպով գո-հարադարդ գօտի մը, ազնուականներու թագ մը. եւ այսպէս է որ Սահլ՝ պատրիկ (արաբերէն պիդրիք) մը եղաւ: Անիկա (Թաուք Իպն Ահմատ) ըսաւ նաեւ որ Բա-րակի եղբայրը, Ապու Ալլահ, կը գտնուէր Եսայի Իպն Եուսուֆի հետ, ծանօթ իբր Իպն Ուլու Իսթիֆանու, Իշխան Բայլա-կանի»:

Դ. - Վիկայութեան կարեւորագոյն մա-սը Սահլի Մու'ավիեա անուն որդի մը ու-նենալն է: Մեր մենագրութեան մէջ տե-սանք որ Սահլի որդին եւ յաջորդը կը կոչ-ուէր Ատրնեբահ: Արդեօք պէտք է երկու-